ՎԱՐՍԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի
գրասենյակի ղեկավարի տեղակալ,
ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի պետության և իրավունքի
տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ,
Հայդելբերգի համալսարանի հրեագիտության ինստիտուտի
մագիստրանտ (Հայդելբերգ, Գերմանիա)

ԻՍՐԱՅԵԼԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀՐԵԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՀՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հոդվածն ուսումնասիրում է Իսրայելի՝ որպես հրեական և ժողովրդավարական պետության հիմնադրման, ինչպես նաև օրենսդրության մեջ պետության հրեական բնույթի արտացոլման հետ կապված հարցերը:

Հոդվածում նշված հարցերի քննարկումը նպատակ ունի ապահովել Իսրայելի պետության, ինչպես նաև իրավական համակարգի բնույթի առավել լիարժեք ընկալումը:

Հիմնաբառեր- *Իսրայելի պետություն, Իսրայելի անկախության հռչակագիր, հրեական պետություն, Քնեսեթ, շաբաթ, հիմնական օրենք:*

Իսրայելի պետության անկախության հռչակագիրն ընդունվեց բրիտանական մանդատի դադարեցման օրը՝ 1948թ. մայիսի 14-ին, Ժողովրդական խորհրդի անդամների կողմից Իսրայելի պետության հիմնադրման հռչակմամբ[2]: Անկախության հռչակագրի ընդունումն այս պետության կարճատև պատմագրության թերևս կարևորագույն էջն է:

Հռչակագրի ընդունման անհրաժեշտությունն ու դրա մոտավոր բովանդակությունը նախատեսված էր ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1947թ. բանաձևով, համաձայն որի. «Նախքան անկախությունն ստեղծվելիք պետություններից յուրաքանչյուրի Ժամանակավոր կառավարության կողմից հռչակագիր պետք է ներկայացվի Միացյալ ազգերին»[3]: Հռչակագրի բնույթի ու կարգավիճակի վերաբերյալ տեսակետները տարբեր են, այնուամենայնիվ, գերակշռող մոտեցման համաձայն՝ այն համապարտադիր իրավաբանական ուժ չունի և կրում է առավելապես քաղաքական, պատմական և խորհրդանշական բնույթ[4]:

Հռչակագրի տեքստի շուրջ տարաձայնությունները բազմաթիվ էին, դրանցից ամենակարևորը, սակայն, հռչակագրում Աստծո վերաբերյալ նշում կատարելն էր[5]: Այսպես, կրոնական ճամբարի ներկայացուցիչները պահանջում էին Անկախության հռչակագրի տեքստի մեջ նշում անել Եհովա աստծո մասին, ինչն ընդունելի չէր Ժողովրդական խորհրդի՝ հրեական համայնքի աշխարհիկ ուժերը ներկայացնող անդամների համար: Արդյունքում, որպես փոխզիջումային տարբերակ, ընտրվեց «Իսրայելի վեմ» ձևակերպումը[6]: Այն Եհովա աստծո՝ Թանախում (հրեական աստվածաշունչ) օգտագործվող բազմաթիվ անուններից մեկն է (Սաղմոսներ 19:15)[7]:

Անվիճելի է, սակայն, Իսրայելի պետությանն Անկախության հռչակագրում տրված բնութագիրը. Իսրայելն ստեղծվեց որպես հրեական և ժողովրդավարական պետություն: Հռչակագրում նշված է. «Ժողովրդական խորհրդի անդամներս՝ Էրեց-Իսրայելի[8] հրեական համայնքի և սիոնիստական շարժման ներկայացուցիչներս..., մեր բնական և պատմական իրավունքի ուժով և ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձևի հիման վրա սույնով հռչակում ենք Էրեց-Իսրայելում հրեական պետության հիմնադրումը, որ կոչվում է «Իսրայելի պետություն»: Հռչակագիրն այնուհետև հավելում է. «Իսրայելի պետությունը բաց է հրեական ներգաղթի և «Աքսորի բերքահավաքի»[9] համար, խթանում է երկրի զարգացումն ի նպաստ իր բոլոր բնակիչների, հիմնվում է ազատության, արդարության և խաղաղության վրա, ինչպես կանխագուշակել էին Իսրայելի մարգարեները, իր բոլոր բնակիչների համար երաշխավորում է սոցիալական և քաղաքական իրավունքների լիակատար հավասարություն՝ անկախ կրոնից, ռասայից կամ սեռից, երաշխավորում է կրոնի, դավանանքի, լեզվի, կրթության և մշակույթի ազատությունը, պահպանում է բոլոր կրոնների Սուրբ վայրերը և հավատարիմ է Միացյալ ազգերի հռչակագրի սկզբունքներին:»[10]:

Իսրայելի պետության բնութագիրը, որպես հրեական և ժողովրդավարական պետություն, ըստ էության, քաղվել է հենց նշված երկու դրույթների համադրությունից՝ դառնալով պետության սոցիալ-քաղաքական և սահմանադրաիրավական համակարգի մեկնակետ, միաժամանակ հիմք դնելով Իսրայելի երկակի բնույթի շուրջ մինչ օրս ծավալվող ամենաթեժ քննարկումների[11]: Ինչպես հաճախ է նշվում մասնագիտական գրականության մեջ, Անկախության հռչակագրում նախատեսված ձևակերպումները, որոնք մի կողմից նախատեսում էին, որ Իսրայելի պետությունը. «... հիմնվում է ազատության, արդարության և խաղաղության վրա, ինչպես կանխագուշակել էին Իսրայելի մարգարեները», և մյուս կողմից երաշխավորում էին. «… իրավունքների լիակատար ազատություն՝ անկախ կրոնից», արդեն իսկ անհամատեղելի են[12]:

Իսրայելի պետության այս երկակի բնութագիրը, որ սկզբնավորվեց Անկախության հռչակագրում, իր հետագա հետևողական զարգացումն ստացավ իսրայելյան օրենսդրության մեջ[13]: Այս հարցի արծարծումը կարևոր է ոչ միայն Իսրայելի պետության, այլև իրավական համակարգի բնույթի պարզաբանման նպատակով: Հարկ ենք համարում նշել նաև, որ, եթե «ժողովրդավարական պետություն» հասկացության մեկնությունը գոնե մեր դեպքում խնդրահարույց չէ այն իմաստով, որ սույնի շրջանակներում հավատարիմ ենք մնում դրա հանրաճանաչ ընկալմանը, ապա պատկերը բացարձակ այլ է «հրեական պետություն» հասկացության դեպքում, ինչին էլ անդրադառնում ենք ստորև:

Իսրայելի պետության «հրեականության» խնդիրը տարբեր առիթներով արծարծվել է դատական որոշումներում, բացի այդ այն լայնորեն քննարկվել է նաև տեսության մեջ՝ առաջ բերելով նոր հակասություններ ու հակադրություններ: Իսրայելցի խոշոր սահմանադրագետ Դավիդ Կրեցմերի բնութագրմամբ. «…տեսակետներն այս կապակցությամբ տատանվում են մինիմալիստականից, ըստ որի՝ Իսրայել ներգաղթելու յուրաքանչյուր հրեայի իրավունքն Իսրայելը որպես հրեական պետություն բնորոշելու միակ անհրաժեշտ տարրն է, մինչև մաքսիմալիստականի, որի կողմնակիցները նույն պետությանը պատրաստ են վերագրելու մեսիանիկ առաքելություն:»[14]:

Թեև հակիրճ, բայց ընդհանուր գծերով ներկայացնելով խնդրի բարդությունը՝ ստորև մեր կողմից կներկայացվի Իսրայելի պետության հրեականության արտահայտությունը պետության աշխարհիկ օրենսդրության մեջ: Խուսափելով ծայրահեղական մոտեցումներից՝ սույնի շրջանակներում պետության օրենսդրության մեջ Իսրայելի հրեականության բնորոշման հարցում մենք որդեգրել ենք առավել չափավոր մոտեցում՝ հարելով մեծամասնության դիրքորոշմանը:

Ինչպես արդեն նշվել է, Իսրայելի պետության բնորոշումը՝ որպես «հրեական» պետություն, առաջին հերթին ամրագրված է հենց Անկախության հռչակագրում, որ կյանքի կոչեց Էրեց-Իսրայելում հրեական պետության հիմնադրումը, պետություն, որ բաց էր լինելու հրեաների ներգաղթի և Աքսորի բերքահավաքի համար: Նշվածը, որ սիոնիստական տերմինաբանությամբ կհնչեր որպես վերադարձ դեպի Սիոն, առանց չափազանցության կարելի է դիտարկել որպես պետության հիմնադրման նախադրյալ և նպատակ միաժամանակ: Չունենալով որևէ իրավական ուժ, բայց աներկբայորեն հանդիսանալով պետական-իրավական համակարգի անկյունաքար՝ Անկախության հռչակագրի այս դրույթն իր հետագա աստիճանական զարգացումը գտավ իսրայելյան օրենսդրության մեջ՝ ծառայելով այդ նպատակի իրագործմանը, որը ստորև ներկայացվում է հիմնական ուղղություններով[15].

ա) «Քնեսեթի մասին» Հիմնական օրենք, մաս 7Ա[16]. համաձայն նշված իրավանորմի՝ «ընտրական ցուցակը չի կարող մասնակցել Քնեսեթի ընտրություններին, եթե դրա նպատակներն ու գործողությունները ուղղակիորեն կամ անուղղակիորեն ուղղված են Իսրայելի պետության՝ որպես հրեա ժողովրդի պետության գոյության ժխտմանը[17]»: Հիմնական օրենքի հիշատակված դրույթն ընդունվել է միայն 1985թ. Հիմնական օրենքում կատարված փոփոխությամբ, մինչդեռ այդ հիմքով ընտրական ցուցակների գրանցումը մերժելու պրակտիկան իրականում ձևավորվել էր ավելի քան քսան տարի առաջ՝ այսպես կոչված, Յարդորի դատական որոշման շրջանակներում: Դա Յարդորն ընդդեմ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի դատական գործի (1965թ.) քննության առարկան կուսակցական ցուցակներից մեկի գրանցումը մերժելու հարցն էր: Ընտրական ցուցակը՝ այն ներկայացրած քաղաքական կուսակցությունը, հարում էր արմատական արաբ-ազգայնական էլ-Արդ շարժմանը[18], որն Իսրայելի պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել էր որպես ապօրինի կազմակերպություն[19]: Այդ ժամանակ գործող ընտրական օրենսդրության մեջ, ինչպես արդեն նշվել է, չկար ձևական պահանջները բավարարող կուսակցական ցուցակների՝ ընտրություններում մասնակցությունն արգելող որևէ դրույթ: Այդուհանդերձ, Իսրայելի գերագույն դատարանն իր անդամների մեծամասնությամբ կողմ արտահայտվեց ցուցակի գրանցումը մերժելու՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմանը: Որպես հիմնավորում բերվում էր այն փաստարկը, որ ցուցակը հարում էր այնպիսի խմբավո-

www.journal.lawinstitute.am

ռումների, որոնք «լծված» էին Իսրայելի պետության կործանման գործին: Մասնավորապես, համաձայն գերագույն դատարանի նախագահ, դատավոր Ագրանատի կարծիքի՝ Իսրայելի բնորոշումը՝ որպես հրեական պետություն, «անվիճելի սահմանադրական փաստ է», որը վիճարկման ենթակա չէ անգամ օրենսդրությամբ, հետևաբար կուսակցությունը, որ ժխտում է այդ «իրողությունը», չի կարող մասնակցել խորհրդարանական ընտրություններին[20]: Իսկ «Քնեսեթի մասին» Հիմնական օրենքի 7Ա մասի մեկնաբանությունը Իսրայելի պետության՝ որպես հրեա ժողովրդի պետության վերաբերյալ Իսրայելի Գերագույն դատարանի կողմից տրվեց 1988թ.: Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված ընտրական ցուցակներից մեկը «Հանուն խաղաղության» առաջադիմական արաբ-հրեական ցուցակն էր, որն օժանդակում էր Արևմտյան ափին և Գազայում պաղեստինյան պետություն հիմնադրելու՝ Պաղեստինի ազատագրման կազմակերպության հետ տարվող բանակցություններին: Այս անգամ, սակայն, գերագույն դատարանը հերքեց, որ նշված ցուցակը որևէ կերպ «նպաստել» է Իսրայելի կործանմանը: Այսպես, գերագույն դատարանն իր անդամների մեծամասնությամբ հստակ սահմանեց, որ «Քնեսեթի մասին» Հիմնական օրենքի 7Ա (1) մասի իմաստով այս կամ այն ցուցակը կարող է անվավեր ճանաչվել (ցուցակի գրանցումը մերժվել՝ Վ.Կ.) բացառապես գաղափարական հիմքերից ելնելով՝ անկախ պետության անվտանգությանը փաստացի սպառնալիք ներկայացնելու կամ նրա թշնամիներին օժանդակելու հանգամանքից: Դրանից բացի, նույն դատական որոշման մեջ գերագույն դատարանի անդամների մեծամասնության կողմից տրվեց նաև Հիմնական օրենքում տեղ գտած «հրեա ժողովրդի պետություն» հասկացության սահմանումը, որը, ըստ որոշման, հիմնված է երեք սկզբունքների վրա. 1. վերադարձի իրավունքը, այսինքն՝ յուրաքանչյուր հրեայի իրավունքը վերադառնալու Իսրայել, 2. պետության մեջ հրեական մեծամասնության պահպանումը և 3. սփյուռքի և Իսրայելի միջև կապը: «Միայն բացահայտ վկայությունն այն մասին, որ այս կամ այն ընտրական ցուցակը, որպես իր քաղաքական ծրագրի հիմնական գիծ, նախատեսում է նշված դրույթներից որևէ մեկի ժխտումը, կհանգեցնի վերջինիս անվավեր ճանաչմանը»,- ասվում է որոշման մեջ: Այս հիմնավորումներից ելնելով էր, որ գերագույն դատարանը ձայների 3 կողմ և 2 դեմ մեծամասնությամբ որոշեց, որ չկան նշված ընտրական ցուցակն անվավեր ճանաչելու բավարար հիմքեր[21]:

բ) Շաբաթը[22] և հանգստյան օրերը՝ ըստ «Հանգստի օրերի մասին» 1948թ. օրդոնանսի. Նշված օրդոնանսի համաձայն՝ հրեական շաբաթը և հրեական տոները (տոն օրերը) պետք է նշվեն որպես հանգստի օրեր, իսկ ոչ հրեաներին իրավունք էր վերապահվում ունենալու իրենց «շաբաթը» (ոչ աշխատանքային օրը՝ Վ.Կ.) և տոն օրերը՝ որպես հանգստի օրեր: Այսպես, շաբաթը և հրեական կրոնական տոներն Իսրայելում ճանաչված են որպես հանգստի պետական օրեր երկրի բնակչության մեծամասնության համար: Գաղտնիք չէ, որ շաբաթի ինստիտուտը կենտրոնական տեղ է զբաղեցնում հուդայականության մեջ[23], իսկ հրեաների՝ գալուտում[24] սփռվելուց հետո շաբաթը կոչված էր լուծելու կարևորագույն մեկ խնդիր՝ «գաղափարական մեկուսացման» շնորհիվ պահպանել հրեա ժողովրդի էթնիկ-կրոնական ինքնությունը: Ինչպես նշում է հայտնի գրող Ահադ հա-Ամը. «ոչ թե հրեաները պահպանեցին շաբաթը, այլ, ճիշտ հակառակը, շաբաթն էր, որ պահպանեց հրեա ժողովրդին»: Այդուհանդերձ, շաբաթն այսօր վերածվել է այն բաժանարար կետին, որ Իսրայելի հասարակությունը բաժանում է երկու հակամարտող ճամբարների՝ կապված շաբաթ օրերին հասարակական տրանսպորտի գործունեության հետ, ինչը տարբեր ժամանակներում բողոքի մեծ ալիք է բարձրացրել հրեա ազգաբնակչության ուլտրա-ուղղափառ հատվածի շրջանակներում: Խնդիրը բազմիցս դարձել է նաև դատական քննության առարկա, որոնցից ամենահայտնին թերևս Բար-իլան փողոցի գործով 1998թ. դատական որոշումն է[25], որով դատարանը «հավասարակշռման բանաձևի»[26] կիրառմամբ սահմանեց, որ հրեական և ժողովրդավարական Իսրայելի պետությունում ուլտրա-ուղղափառ ազգաբնակչության կրոնական զգացմունքներին չվնասելու համար աշխարհիկ ազգաբնակչության տեղաշարժվելու ազատության սահմանափակումը համաչափ և անհրաժեշտ է: Արդյունքում Բար-իլան փողոցը փակվեց շաբաթ և տոն օրերին՝ աղոթքի համար սահմանված ժամերին:

գ) Ազգային դրոշը և խորհրդանիշը՝ համաձայն «Դրոշի և խորհրդանիշի մասին» 1949թ. օրենքի. Նշված օրենքի համաձայն՝ ազգային դրոշը կապույտ և սպիտակ դրոշն է, որի գույները ներշնչված են ավանդական հրեական աղոթաշալից՝ թալիթից, որի կենտրոնում պատկերված է Դավիթի աստղը: Նույն օրենքի համաձայն՝ Իսրայելի պետության խորհրդանիշը յոթճյուղանի մենորան է՝ մոմակալը, որն Արկի, ինչպես նաև հրեական առաջին և երկրորդ տաճարների կարևորագույն տարրերից է համարվում[27]: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Իսրայելի պետության խորհրդանիշներ օրհներգն ու դրոշը հստակ արտահայտված ավանդական-կրոնական խորհուրդ ունեն, ինչը որոշ հեղինակների հիմք է տալիս խոսելու Իսրայելում, ի դեմս հուդա-

յականության, քաղաքացիական կրոնի առկայության մասին:

դ) Իսրայելի պաշտպանության բանակը պարտավոր է իր զինվորներին մատուցել միայն քոշեր սնունդ: Նմանատիպ պահանջ առկա է նաև սննդի այլ հասարակական օբյեկտների նկատմամբ:

ե) Իսրայելի պետության հրեականության մեկ այլ հստակ արտահայտություն կարելի է գտնել մարդու իրավունքների ոլորտում: Այսպես, այս բնագավառում ընդունված երկու Հիմնական օրենքները, դրանցում երաշխավորված իրավունքների պաշտպանությունից բացի, դրանց ընդունման «առաքելություն» է համարում նաև այդ Հիմնական օրենքներում Իսրայելի՝ որպես հրեական և ժողովրդավարական պետության արժեքի արմատավորումը:

Այսպիսինն է Իսրայելի պետության հրեականության օրենսդրական ամրագրումը հիմնական գծերով[28]: Ինչպես արդեն նշել ենք, այս հարցի պարզաբանումն անհրաժեշտ էր Իսրայելի պետության, ինչպես նաև իրավական համակարգի բնույթի ամբողջական ընկալման համար: Բացի այդ, այն կարևոր է Իսրայելի պետության նշված երկու՝ հրեական և ժողովրդավարական բնութագրերի համատեղելիության հարցի պարզաբանման տեսանկյունից, ինչն ամենալայն քննարկումների առարկա է դարձել ինչպես մասնագիտական գրականության մեջ, այնպես էլ դատական որոշումներում, որը, սակայն, դուրս է սույն հոդվածի ուսումնասիրության շրջանակներից:

---

[1] Եբրայերեն՝ «Մոեցետ հա-ամ»: Ժողովրդական խորհուրդը բաղկացած էր Յիշուվի՝ Պաղեստինի հրեական համայնքի (1918-1948թթ.) բոլոր քաղաքական ուժերը ներկայացնող 33 անդամներից:

[2] Իսրայելյան մասնագիտական գրականության մեջ ընդունված է Անկախության հռչակագիրը բաժանել երեք մասերի: Այսպես, առաջին մասը ներկայացնում է հրեա ժողովրդի պատմական անցյալը և դրա կապը Իսրայելի տարածքի հետ: Երկրորդ մասը հայտնի է որպես գործառնական մաս: Իսկ երրորդ մասն ամրագրում է նորաստեղծ պետության որոշ սկզբունքներ. «… այն իր բոլոր բնակիչների համար, անկախ կրոնից, ռասայից կամ սեռից, երաշխավորում է սոցիալական և քաղաքական իրավունքների բացարձակ հավասարություն և կրոնի, խղճի, լեզվի և մշակույթի երաշխավորված ազատություն…»: (http://www.mfa.gov.il/mfa/foreignpolicy/peace/ guide/pages/declaration%20of%20establishment%20of%20state%20of%20israel.aspx):

[3] ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1947թ. նոյեմբերի 29-ի թիվ 181/11 բանաձևով հաստատվեց ենթամանդատային Պաղեստինի տարածքը երկու պետությունների՝ արաբականի և հրեականի, բաժանելու ծրագիրը, միաժամանակ հատուկ միջազգային ռեժիմ սահմանվեց Երուսաղեմ քաղաքի համար (http://www.yale.edu/lawweb/avalon/un/res181.htm):

[4] Ի սկզբանե չհանդիսանալով իրավական ակտ՝ ընդունված է համարել, որ Քնեսեթի կողմից մարդու իրավունքների ոլորտում 1992թ. երկու Հիմնական օրենքների ընդունումից հետո, որոնք ուղղակի հղում էին պարունակում Անկախության հռչակագրին, վերջինս ձեռք բերեց քվազի-սահմանադրական կարգավիճակ: Հիմնական օրենքների ընդունմամբ պայմանավորված՝ Իսրայելի սահմանադրահիրավական զարգացումների համար տե՛ս, օրինակ Navot S. Israeli constitutional law. The Netherlands. Kluwer Law International, 2007, էջ 198-203:

[5] Ավելի մանրամասն տե՛ս Peled Y. Ethnic Democracy and the Legal Construction of Citizenship: Arab Citizens of the Jewish State // The American Political Science Review, Vol. 86, No. 2 (Jun., 1992), էջ 432-443:

[6] Աստծո վերաբերյալ հիշատակումը կատարված է Անկախության հռչակագրի եզրափակիչ մասում, որտեղ մասնավորապես նշված է. «Հավատալով «Իսրայելի վեմին»՝ Ժամանակավոր խորհրդի անդամներս ստորագրում ենք Անկախության հռչակագիրը...:»: Տե՛ս Անկախության հռչակագիրը, նույն տեղը:

[7] Սաղմոսներ 19:15 համար տե՛ս http://www.chabad.org/library/bible_cdo/aid/16240/jewish/Chapter-19.htm:

[8] Եբրայերենից թարգմանաբար՝ Իսրայելի երկիր:

[9] Եբրայերեն՝ «Կիբուց գալույոտ»: Այն նախքան Էրեց-Իսրայել մուտք գործելը Մովսեսի կողմից Իսրայելի ժողովրդին տված աստվածաշնչյան խոստում է (Երկրորդումն օրինաց, 30:1-5): Մովսեսը կանխագուշակում է, որ Իսրայելի ժողովուրդը նորից կմեղսագործի նոր երկրում և դրա համար պիտի արտաքսվի: Ինչևէ, նա կանխագուշակում է նաև ժողովրդի վերադարձը Էրեց-Իսրայել: Բաբելոնյան գերեվարության ժամանակ Իսահակ և Եզեկիել մարգարեներն իրենց մարգարեություններում Իսրայելի ժողովրդին քաջալերում էին ապագայում բոլոր տարագիրների՝ Իսրայելի երկրում հավաքվելու խոստումով:

[10] Տե՛ս Անկախության հռչակագիրը, նույն տեղը:

[11] Իսրայելի պետությանը վերը տրված երկակի բնութագիրը, անշուշտ, խնդրահարույց է: Մասնագիտական գրականության մեջ տասնամյակներ շարունակ լուրջ քննարկումներ են ծավալվել իսրայելյան ժողովրդավարության հիմնախնդրի շուրջ մասնավորապես՝ Իսրայելի պետության արաբ ազգաբնակչության իրավական կարգավիճակի տեսանկյունից: Իսրայելի արաբ քաղաքացիների ոչ իրավահավասար կարգավիճակին «լուծում տալու» համար առաջ են քաշվել ժողովրդավարության տարբեր տեսություններ կամ փորձեր են արվել առկա իրավիճակը տեղավորել քաղաքացիության այս կամ այն մոդելի շրջանակներում: Ըստ այդմ, տարածված տեսակետներից մեկի համաձայն՝ Իսրայելի պետությունն էթնիկ ժողովրդավարություն է, որը, ի տարբերություն մեծամասնության կամ ընկերային ժողովրդավարության, բնորոշվում է պետության նկատմամբ մեկ էթնիկ խմբի ինստիտուցիոնալ գերակայությամբ:

էթնիկ ժողովրդավարությունը, բնորոշվում է առանձին անհատների քաղաքական և քաղաքացիական իրավունքներ, ինչպես նաև փոքրամասնություններին կոլեկտիվ իրավունքներ վերապահելով, միաժամանակ, ինչպես արդեն նշվել է վերևում, ճանաչվում է մեկ էթնիկ խմբի ինստիտուցիոնալ գերակայությունը: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Smooha S. Israel as an Archetype // Israel studies, Volume 2, Number 2 Ethnic Democracy, էջ 200-241: Մեկ այլ դեպքում պրոֆ. Փելեդն, Իսրայելի՝ ազգությամբ արաբ քաղաքացիների նկատմամբ ոչ իրավահավասար մոտեցումը փորձում է հիմնավորել քաղաքացիության տարբեր մոդելների կիրառմամբ՝ նշելով, որ Իսրայելի հրեա ազգաբնակչության դեպքում գործում է քաղաքացիության հանրապետական մոդելը, իսկ արաբ ազգաբնակչության նկատմամբ՝ ազատական մոդելը: Վերջին՝ ազատական, մոդելի դեպքում քաղաքացիները չեն մասնակցում հանրային բարիքի ստեղծմանը, ինչպես, օրինակ, երկրի պաշտպանության դեպքում: Փորձելով բացատրել պաղեստինյան արաբների՝ Իսրայելի պետության քաղաքացիության երևույթը՝ պրոֆ. Փելեդը մատնանշում է, որ Իսրայելի քաղաքական մշակույթը բաղկացած է ոչ թե երկու սկզբունքներից՝ լիբերալիզմ և էթնիկ-ազգայնականություն, այլ երեք՝ նշվածներին ավելացնելով ևս մեկ՝ հանրապետականության (republicanism) սկզբունքը: Ըստ այդմ, ինչպես նշվել է վերևում, Իսրայելի հրեա ազգաբնակչության դեպքում գործում է քաղաքացիության հանրապետական մոդելը՝ հանրապետական քաղաքացիությունը, իսկ Իսրայելի արաբ ազգաբնակչության դեպքում՝ ազատական քաղաքացիությունը: Քաղաքացիության հանրապետական մոդելի տակ նկատի է ունեցվում ազգ-պետության և դրա առանձին քաղաքացիների փոխհարաբերությունները բնորոշող ակնկալիքների որոշակի ամբողջություն, ինչը գործնական առումով իրականացվում է իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև այդ ակնկալիքների իրականացման ընթացակարգի սահմանմամբ: Քաղաքացիության երկրորդ՝ ազատական, մոդելին հատուկ են անհատական, համընդհանուր և հավասարության բնութագրիչները: Մինչդեռ հանրապետական քաղաքացիությանը բնորոշ է համընդհանուր բարոյական նպատակը: Ազատական մոդելի քաղաքացիներն իրենց կարգավիճակի՝ իրավունքների որոշակի խմբի պասիվ կրողներն են, դրան հակառակ՝ քաղաքացիության հանրապետական մոդելը ենթադրում է հանրային բարիքը սահմանելու, պաշտպանելու և աջակցելու հարցում քաղաքացիների ակտիվ մասնակցությունը: Ավելի մանրամասն տե՛ս Peled Y., նշված աշխատությունը:

[12] Ավելի մանրամասն տե՛ս Englard I. Law and Religion in Israel // The American Journal of Comparative Law, Vol. 35, No. 1 (Winter, 1987), էջեր 185-208:

[13] Սույնի շրջանակներում քննության առարկա է Իսրայելի պետության աշխարհիկ օրենսդրությունն Իսրայելի երկակի բնույթի օրենսդրական ամրագրման տեսանկյունից: Ըստ այդմ՝ Իսրայելի իրավական համակարգի ինքնուրույն ենթահամակարգ կազմող հրեական կրոնական իրավունքի հետ կապված հարցերը դուրս են սույն հոդվածի ուսումնասիրության շրջանակներից:

[14] Իսրայելի պետության երկակի բնութագրի մասին տե՛ս, օրինակ, Kretzmer D. Constitutional Law: Introduction to the law of Israel // Introduction to the Law of Israel / edited by Shapira A., DeWitt-Arar K. C. The Hague, London, Boston. Kluwer Law International, 1995:

[15] Նշվածը հիմնականում համընկնում է Ռ. Լապիդոթի կողմից առաջ քաշված ցանկին (Lapidoth, R. Freedom of Religion and Conscience in Israel / edited by Shapira A., DeWitt-Arar K. C. The Hague, London, Boston. Kluwer Law International, 1995, էջեր 1369-1376):

[16] Նշված Մաս 7Ա-ն Քնեսեթի կողմից ընդունվեց 1985թ. հուլիսի 31-ին: Հիմնական օրենքի ամբողջական տեքստի համար տե՛ս http://www.knesset.gov.il/laws/special/eng/basic2_eng.htm:

[17] Քնեսեթում նշված դրույթն արժանացավ ընդդիմության խիստ քննադատությանը՝ դրանում Իսրայելին՝ որպես «հրեա ժողովրդի պետության» և ոչ թե «հրեական պետության» տրված բնութագրի պատճառով, ինչից ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարելի է ենթադրել՝ Իսրայելն իր բնակչության՝ այդ ժամանակ 17-18 տոկոսը կազմող ոչ հրեա ազգաբնակչության պետությունը չէ: Այս առումով կցանկանայինք հատկապես անդրադառնալ պրոֆ. Դավիդ Կրեցմերի այն տեսակետին, համաձայն որի՝ «Մաս 7Ա-ում տրված բնորոշումն անտեսում է Իսրայելի պետության ոչ հրեա քաղաքացիների կարգավիճակը, որոնք կազմում են ազգաբնակչության 18 տոկոսը: Կարելի է հետևություն անել, որ, հակառակ պետության ժողովրդավարական բնույթին, այսինքն՝ իր բոլոր քաղաքացիների պետությունը լինելուն, Իսրայելի պետությունն իր ոչ հրեա քաղաքացիների պետությունը չէ»: Ապա շարունակելով՝ հեղինակը նշում է. «Նման տարբերակված մոտեցման հնարավոր հետևանքները հստակ շարադրված էին Բեն Շալոմն ընդդեմ Քնեսեթի 12-րդ ընտրություններում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործով դատավոր Դով Լևինի մասնավոր կարծիքում, համաձայն որի՝ ցուցակը, որն Իսրայելում հրեաների և արաբների միջև լիակատար հավասարության պահանջ է ներկայացնում՝ ինչպես կոլեկտիվի, այնպես էլ անհատի իմաստով, պետք է Հիմնական օրենքի 7Ա մասի ուժով հանվի ընտրություններից» (տե՛ս, Kretzmer D., նշված աշխատությունը, էջ 304-305):

[18] Արաբերենից թարգմանաբար նշանակում է «հողը»:

[19] Դ. Շարֆմանը այս գործը քննարկում է կամավորական կազմակերպությունների գործունեության շրջանակում՝ առավելապես օսմանական ընկերակցությունների մասին օրենքի հիման վրա (տե՛ս Sharfman D. Living without a constitution: Civil Rights in Israel. Armonk, NY, 1993, էջ 1360-1365):

[20] Յարդորի վճիռը՝ դրանում տեղ գտած հիմնավորումների առումով, այլևս երբեք չկրկնվեց Իսրայելի դատական պրակտիկայում:

[21] Տե՛ս Peled Y., նույն տեղը: Տե՛ս նաև Kretzmer D., նշված աշխատությունը, էջ 42:

[22] Շաբաթի մանրամասն վերլուծության համար տե՛ս, մասնավորապես, Shulevitz, J. The Sabbath world; Glimpses of a Different Order of a Time. New York. Random House, 2010, 247 էջ; Katz, J. The "Shabbes Goy"; a Study in Halakhic Flexibility. Jerusalem. The Jewish Publication Society, Philadelphia, 1989, 253 էջ; [Rabbi] Goldman, S. The Guide to the Sabbath. London. Jewish Chronicle Publications, 1967, 75 էջ; Grunfeld, D.I. The Sabbath: A Guide to its Understanding and observance. New York. "The House of the Jewish Book", 1958, 97 էջ; Rosmarin, T.W. The Oneg Shabbath Book. New York. The Jewish Book Club, 1940, 97 էջ:

[23] Շաբաթը պահելու սկզբնական պահանջը նախատեսված է Թանախում՝ հրեական Աստվածաշնչում: Այն մի կողմից

խորհրդանշում է հրեա ժողովրդի կապն արարման պատմության հետ և մյուս կողմից արտացոլում է հրեա ժողովրդի և Աստծո միջև «կնքված» ուխտը: Շաբաթի ինստիտուտի հետագա ընդլայնումը տեղի ունեցավ հենց Թանախում՝ հետզհետե ընդգրկելով ավելի մեծ թվով պատվիրաններ ու սահմանափակումներ, ինչպես օրինակ՝ հավաքելը և կերակուր պատրաստելը (Ելից 16:23-29, Թվեր 15:32), կրակ վառելը (Ելից 35:3), իր բնակատեղից դուրս գալը (Ելից 16:29), առուծախը (Նեհեմիա 10:31) և այլն:

[24] Եբրայերենից թարգմանաբար բառացի նշանակում է արտաքսում:

[25] Տե՛ս HCJ 5016/96; HCJ 5025/96; HCJ 5090/96; HCJ 5434/96; HCJ 5016/96; HCJ 5025/96 Horev et al. v. Minister of Transportation et al, Sup. Ct. Isr., 1997:

[26] Ինչպես դատարանն է նշում, տրանսպորտի նախարարը կոչված էր հաշվեկշռելու կրոնական զգացմունքներն ու տեղաշարժվելու ազատությունը՝ դրանց միջև հավասարակշռություն գտնելու նպատակով: Իսկ դատարանն իր հերթին պետք է լուծում տար այն հարցին, թե արդյոք հնարավոր է սահմանափակել մարդու հիմնական իրավունքները՝ այլոց կրոնական զգացմունքներին «չվնասելու» համար, և եթե՝ այո, ապա ի՞նչ չափով: Այս մասով գերագույն դատարանը սահմանեց. «Ցանկացած սոցիալական սկզբունք ունի հարաբերական արժեք: Ըստ այդմ՝ ցանկացած հիմնարար սկզբունքի արժեք պետք է որոշվի իր հետ հակասության մեջ գտնվող այլ սկզբունքի հետ համադրության արդյունքում:»: Ելնելով երկու արժեքների՝ սահմանափակման ենթակա լինելու գաղափարից՝ դատարանի խնդիրն էր ապահովել, որ մարդու իրավունքների սահմանափակումը չհանգեցնի կրոնական հարկադրանքի՝ կրոնական ազատությունն ապահովելու նկատառումից ելնելով: Ըստ դատարանի՝ այս երկու արժեքների հաշվեկշռման բանաձևը նախատեսված է «Մարդու արժանապատվության և ազատության մասին» Հիմնական օրենքի 8-րդ մասով: Ըստ այդմ՝ պետք է որոշել, թե արդյոք Բար-իլան փողոցի մասնակի փակումը համաչափ է Իսրայելի՝ որպես հրեական և ժողովրդավարական պետության արժեքներին: Այլ կերպ ասած՝ Իսրայելի հրեական և ժողովրդավարական պետությունում արդյոք համաչափ է մարդու տեղաշարժվելու ազատության սահմանափակում, այլոց կրոնական զգացմունքներին վնաս չպատճառելու համար: Այս կապակցությամբ դատարանը սահմանեց, որ ժողովրդավարական հասարակությունում համայնքային կյանքն իր բնույթով ենթադրում է ոտնձգության համար «բաց լինելը», ինչն անհրաժեշտ է մարդու իրավունքների իրացման նպատակով: Բայց, մյուս կողմից, մարդու հիմնական իրավունքներն իրենց հերթին ենթակա են սահմանափակման: Սա փոխադարձ հանդուրժողականության մյուս կողմն, անհրաժեշտ պլյուրալիստական հասարակություններում: Սակայն, որպեսզի ժողովրդավարական հասարակություններում մարդու հիմնական իրավունքների խախտման հաշվեկշիռը պահպանված լինի, կրոնական զգացմունքների վնասման «հանդուրժողականության շեմ» պետք է սահմանվի. ժողովրդավարական հասարակությունում մարդու իրավունքների խախտումը հիմնավորված կլինի միայն այն դեպքում, երբ վնասը գերազանցի նշված «հանդուրժողականության շեմը»՝ պայմանով, որ օգուտի և վնասի միջև կամ այլ կերպ՝ միջոցների և նպատակի միջև կապը համաչափ է: Մարդու իրավունքների խախտումը հիմնավոր կլինի, եթե 1) կրոնական զգամունքները հաշվի առնելու պահանջը համապատասխանում է օրենքով նախատեսված նպատակներին, 2) կրոնական զգացմունքները հաշվի առնելը թույլատրվում է, եթե դա իրենով որևէ կրոնական հարկադրանք չի ենթադրում և 3) կրոնական զգացմունքները կարող են հաշվի առնվել միայն այն դեպքում, երբ դրանց պատճառված վնասն այնքան մեծ է, որ անցնում է «հանդուրժողականության շեմը»: Ընդունելով, որ տարբեր իրավունքների դեպքում շեմը տատանվում է, գերագույն դատարանը սահմանեց, որ մասնավորապես տեղաշարժվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթե նման վնասն անցնում է հանդուրժողականության շեմը: Ըստ այդմ՝ վնասը կարող է գնահատվել որպես հանդուրժողականության շեմն անցած, եթե բավարարում է հետևյալ երեք պահանջներին. 1) կրոնական զգացմունքներին և ընդհանրապես կրոնական կենսակերպին հասցված վնասը պետք է լինի խիստ, ծանր և լուրջ, 2) հավանականությունը, որ վնասը կարող է իրագործվել, պետք է «գրեթե հաստատ» լինի, 3) կրոնական զգացմունքների հիմքում պետք է ընկած լինի զգալի հանրային շահ և 4) տեղաշարժվելու ազատությանը պատճառված վնասը չպետք է գերազանցի անհրաժեշտ չափը: Հաշվի առնելով այս չափանիշները՝ դատարանը գտավ, որ շաբաթ օրերին տրանսպորտային միջոցների երթևեկությունը Բար-իլան փողոցում լրջորեն վնասում է ուլտրա-ուղղափառ հրեական համայնքի կրոնական զգացմունքները՝ մասնավորապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բար-իլանը տեղակայված է ուլտրա-ուղղափառ հրեական թաղամասի կենտրոնում:

[27] Ինչ վերաբերում է ազգային օրհներգին, ապա, համաձայն նույն օրենքի, Իսրայելի պետության ազգային օրհներգը հա-Տիկվան է, որն ի սկզբանե սիոնիստական շարժման հիմնն էր: Հատկանշական է, որ այն պաշտոնապես ճանաչվեց որպես Իսրայել պետության օրհներգ միայն 2004թ.՝ վերը հիշատակված օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո: Օրենքը հետայսու վերանվանվեց «Դրոշի, խորհրդանշանի և օրհներգի մասին» օրենք (http://www.knesset.gov.il/holidays/eng/hatikva_eng.htm):

[28] Մեկ անգամ ևս հարկ է ընդգծել, որ վերը բերված թվարկումը թեև սպառիչ չէ, սակայն հիմնական գծերով բացահայտում է օրենսդրության մեջ Իսրայելի պետության հրեականության ամրագրումը: Միաժամանակ, սակայն, առավել նեղ կամ առավել լայն թվարկում կարելի է գտնել առանձին հեղինակների մոտ: Դավիթ Կրեցմերը մատնանշում է նաև հրեական ազգային ինստիտուտները, մասնավորապես Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը և հրեական գործակալությունը՝ հղում անելով Իսրայելի պետության հիմնադրման, ինչպես նաև ներգաղթի խթանման և դրա հետ փոխկապակցված այլ բնագավառներում այդ ինստիտուտների՝ օրենսդրորեն ամրագրված պատմական դերին: Դրանից բացի, հեղինակը վկայակոչում է սույն հարցի տեսանկյունից հետաքրքրություն ունեցող երկու այլ բնագավառներ: Առաջինը «Պետական կրթության մասին» 1953թ. օրենքն է, որի հիման վրա ձևավորվեց պետական կրթության համակարգը՝ փոխարինելով մինչպետական ժամանակաշրջանում գոյություն ունեցող «աղանդավորական» կրոնական կրթական համակարգին: Նշված օրենքի 2-րդ մասի համաձայն՝ «Պետական կրթության նպատակը պետության մեջ հրեական մշակութային արժեքների վրա հիմնված միջնակարգ կրթության, ինչպես նաև պետության և հրեա ժողովրդի նկատմամբ նվիրվածության արմատավորումն է:»: Երկրորդը «Հեռարձակման ոլորտում լիազոր մարմնի մասին» 1965թ. օրենքն է, որով նախատեսվեց հեռարձակման ոլորտում լիազոր մարմնի ստեղծումը՝ որպես պետության ողջ տարածքում իրականացվող բոլոր հեռուստառադիոհեռարձակումների համար պատասխանատու կիսանկախ

մարմին: Այդ մարմնի խնդիրները, որպես այդպիսին, հետևյալն են՝ հրեական ժառանգության և դրա արժեքների վերաբերյալ գիտելիքների խորացումը և կապերի ամրապնդումը, ինչպես նաև պետական կրթության նպատակների հետագա իրացումը (այս մասին տե՛ս Kretzmer D., նշված աշխատությունը, էջ 43-45):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. [Rabbi] Goldman, S. The Guide to the Sabbath. London. Jewish Chronicle Publications, 1967, 75 էջ
2. Englard I. Law and Religion in Israel // The American Journal of Comparative Law, Vol. 35, No. 1 (Winter, 1987), 209 էջ
3. Grunfeld, D.I. The Sabbath: A Guide to its Understanding and observance. New York. "The House of the Jewish Book", 1958, 97 էջ
4. Horev v. Minister of Transportation: HCJ 5016/96; HCJ 5025/96; HCJ 5090/96; HCJ 5434/96; HCJ 5016/96; HCJ 5025/96 Horev et al. v. Minister of Transportation et al, Sup. Ct. Isr., 1997
5. Katz, J. The "Shabbes Goy"; a Study in Halakhic Flexibility. Jerusalem. The Jewish Publication Society, Philadelphia, 1989, 253 էջ
6. Kretzmer D. Constitutional Law: Introduction to the law of Israel // Introduction to the Law of Israel / edited by Shapira A., DeWitt-Arar K. C. The Hague, London, Boston. Kluwer Law International, 1995, 39-58 էջեր
7. Lapidoth, R. Freedom of Religion and Conscience in Israel / edited by Shapira A., DeWitt-Arar K. C. The Hague, London, Boston. Kluwer Law International, 1995, 1369-1376 էջեր
8. Navot S. Israeli constitutional law. The Netherlands. Kluwer Law International, 2007, 379 էջ
9. Peled Y. Ethnic Democracy and the Legal Construction of Citizenship: Arab Citizens of the Jewish State // The American Political Science Review, Vol. 86, No. 2 (Jun., 1992, 432-443 էջեր
10. Rosmarin, T.W. The Oneg Shabbath Book. New York. The Jewish Book Club, 1940, 97 էջ
11. Sharfman D. Living without a constitution: Civil Rights in Israel. Armonk, NY, 1993, 200 էջ
12. Shulevitz, J. The Sabbath world; Glimpses of a Different Order of a Time. New York. Random House, 2010, 247 էջ
13. Smooha S. Israel as an Archetype // Israel studies, Volume 2, Number 2 Ethnic Democracy, 200-241 էջեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԿԱՅՔԵՐ

1. http://www.knesset.gov.il/holidays/eng/hatikva_eng.htm
2. http://www.knesset.gov.il/laws/special/eng/basic2_eng.htm
3. http://www.mfa.gov.il/MFA/Peace%20Process/Guide%20to%20the%20Peace%20Process/Declaration%20of%20Establishment%20of%20State%20of%20Israel
4. http://www.yale.edu/lawweb/avalon/un/res181.htm:

Варсер Карапетян
Заместитель руководителя канцелярии общественного защитника палаты адвокатов Республики Армения,
Аспирант кафедры теории государства и права и истории юридического факультета ЕГУ,
Магистр института иудаики университета Гайдельберга (Гайдельберг, Германия)

РЕЗЮМЕ

Основание Израиля как еврейского и демократического государства: отражение еврейства в законодательстве

Статья рассматривает вопросы основания Израиля, как еврейского и демократического государства, а также вопросы отражения в законодательстве еврейского характера государства.

Обсуждение указанных вопросов в статье направлена на обеспечение наиболее полноценного восприятия сути государства Израиль, а также правовой системы.

Ключевые слова: *государство Израиль, декларация о независимости Израиля, еврейское государство, нессет, шаббат, основной закон.*

Varser Karapetyan
Deputy Head at the Public Defender Office of the Chamber of Advocates of the RA
PhD Student at the Chair of Theory and History of State and Law, Law Department, YSU MA, University of Heidelberg, Hochschule for Jewish Studies (Heidelberg, Germany)

SUMMARY

The establishment of Israel as a Jewish and democratic state: reflection of Jewishness in the legislation

The article examines issues concerning the establishment of Israel as a Jewish and democratic state, as well as the reflection of Jewish character of the state in the legislation.

The discussion of these issues in the article aims at a fuller understanding of the character of the State of Israel, as well as of the legal system.

Keywords: *The State of Israel, Declaration of Independence of Israel, Jewish State, Knesset, Sabbath, Basic Law.*